

24165

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ՅՈՒՆԻ ԿՐԿԵՐԻ, ՄԻԱցն Կ



Ա. ՄԻԿՈՅԱՆ

ՃԱՌ

ԱՐՏԱՍԱՆԱԾ ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆ
ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԲԱՆՎՈՐՈՒ-
ՔԻՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆԸ

ԿՈՒՍԴՐԱԾ • ԵՐԵՎԱՆ

331.87
Մ-70

2105 JULY 19



01 JUL 2013

33 740-24165

15 JAN 2011

331.87

5-70

մը

Պրոլետարիատ քուղա յերկրագիտության, միացե՛ք

Ա. Մակովսկ

Ա Ր

ԱՐՏԱՍԱՆԱԾ ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆ
ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԲԱՆՎՈՐՈՒ-
ՔԻՆԵՐԻ ՀԱՄԱՍԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԱՌԱՋԻՆ ԽՈՐՃՐԱԿՑՈՒԹՅԱՆ

397 16720-586
 $\frac{1008}{38386}$

1935 թ. Նոյեմբերի 16-ին



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Թարգմ. Մ. Զաքարյան
Խմբագիր Հ. Գասպարյան
Սրբագրիչ Վ. Զիգեզյան
Տեխն. խմբ. Ա. Խաչատրյան

Գլավմիտի լիտոր Ը-83, հրատ. № 828
պատվեր № 884, տիրաժ 15,000, ինկերու, Ռ-80

Հայկական տպարան, Յերևան, Ալավերդյան 7/2

Ա. ՄԻԿՈՅԱՆ

Речь на первом всесоюзном
совещании рабочих и работниц-
стахановцев

Армвартнадат, Еревань, 1935

Հնկերներ, այն, ինչ մենք լսում և տեսնում ենք
այստեղ, արդյունաբերության ու տրանսպորտի ստա-
խանովականների համարիութենական խորհրդակցու-
թյանը, պերճախոս ու ակնառու կերպով ցույց ե տա-
լիս, վոր մեր յերկիրն իմաստուն, մեծ Ստալինի ա-
ռաջնորդությամբ, թևակոխել ե վիթխարի վերելքի
նոր շրջանը: (Բուռն ծափակարություն: Բացականչու-
թյուններ՝ «ուռա»):

Ինչպես ժողովրդական շարժման ամեն մի մեծ
վերելք, այնպէս ել ներկա վերելքը, վոտքի հանեց
մեր ժողովրդի, մեր բանվորների ու կոլտնտեսականնե-
րի տաղանդավոր մարդկանց նոր շերտեր, առաջ քա-
շեց նոր առաջնորդներ ամենաստորին խավերից, գոր-
ծարաններից, կոլտնտեսություններից ու խորհունտե-
սություններից: Մենք, կուսակցության կենտկոմի
անդամներս, լսում ենք ստախանովական բանվորների
ճառերը և ուրախանում: Հեղախուսության ընթացքում
մենք քիչ ճառեր չենք լսել, սակայն մեր սիրտը նոր
բերկրանքով ե լցվում, յերբ լսում ենք բանվորների ու
գյուղացիների այս նոր առաջնորդների պատմածներն
իրենց սքանչելի գործերի ու հաղթանակների մասին:

Այս մեծ ժողովից միքանի որ առաջ, կրեմլի պա-
լատում, ընկ. Ստալինը, կենտկոմի ու կառավարու-
թյան անդամներն ընդունեցին ճակնդեղի դաշտերի

կողանաեսուհիների պատվիրակությունը, ընդունեցին նրանց, ովքեր ընկ. Ստալինի կոչով գնացին Մարիա Դեմչենկոյի հետեւից և տվյալն ճակնդեղի ռեկորդային բարձր բերք կոլտնտեսային ու խորհանական դաշտերում։ Յե՛վ այդ պատվիրականության ընդունումը մեր կառավարության կողմից, և՝ Լենինի այն շքանշանները, վոր զարդարում են այժմ «Հինգ հարյուրականների» կուրծքը, և՝ ստախանովականների համամիութենական հավաքը—այս բոլորը վկայում են մեր յերկրի մեծ վերելքի մասին, սոցիալիզմի մեծագույն հաղթանակի մասին։ (Ծափահարություն)։

Այսորվա իրադրության տարբերությունն այն և, վոր այժմ արդեն մեր յերկրի ամենաետամեաց մարդիկն ել սեփական փորձով համոզվեցին, վոր կոմունիստական կուսակցության հիմնական դիմումն արդարացի յե ու ճիշտ։ Ուստի այժմ, բազմամիլիոն ամբողջ մասսան, առաջավոր մարդկանց հետ միասին, վատահքայլերով առաջ և գնում շատ ավելի արագ, քան առաջ, առաջ և գնում տիտանային քայլերով։ Ուստի այժմ «Վիժնեցին» բոլոր նորմաններն ու պլանները, վիժեցին գերազանցման իմաստով։

Այժմ մենք գեռ չենք կարող միանդամայն լրիվ ու ճշգրիտ կերպով ասել, թե ինչ կտա որեցոր աճող ստախանովյան շարժումը։ Յերբ մենք կջախջախենք ստախանովյան շարժման բացահայտ և գաղտնի թըշնամիներին, յերբ կվերակառուցվի տնտեսական ամբողջ զեկավարությունը վերևից մինչև ներքեւ, յերբ դործարանների, տրեստների գլխավոր վարչությունների զեկավարությունը գործնականորեն կղլիսավորի ստախանովյան շարժումը, այն ժամանակ մենք մաս-

սայական մասշաբաթվ ցույց կտանք սոցիալիստական աշխատանքի բարձր արտադրողականության իրոք չտեսնված որինակներ, կունենանք մեքենաների ու մթերքների մեծագույն առատություն։

Յերբ, ամենապժիւարին տարիներին, ընկեր Ստալինը մեզ առաջ եր տանում, շատերը տարակուսում եյին մեր գործի ճշուության նկատմամբ։ Մեր ստալինյան-լենինյան դիմքը մերժում եյին ամեն տեսակ ուզութունիստները՝ կենտկոմի գծից թեքված անդամների գլուխայրությամբ։ Իսկ այժմ, մեր յերկրի նույնիսկ ամենահետամնաց մարդիկ հասկացան այն, ինչ այն ժամանակ չեյին ուզում կամ չեյին կարողանում հասկանալ կենտկոմի այդ անդամները։ Բայց ինչպէս ուստահեց այդ։ Ո՞ւմն ենք պարտական մենք այդ հաղթանակների համար։ Ընկեր Ստալինը 1925 թվականին, կուսակցության 14-րդ համագումարում հանձարեղ խորատեսությամբ որակարդի մեջ մացրեց մեր յերկիրը զյուղացիական հետամնաց յերկրից ինդուստրիալ յերկիր գարձնելու հարցը։ Ընկեր Ստալինն անհողղողդ համառությամբ, լենինիստի ամբողջ կրքատությամբ որ ավոր պայցար եր մզում այդ ինդիբը լուծելու համար և, մեծագույն դժվարությունների միջոցով, ջարգելով իր ճանապարհի բոլոր խոչընդուները, ջախջախելով բոլոր թշնամիներին, յերկիրը հասցրեց սոցիալիզմի հաղթանակին։ Ինդուստրացման ստալինյան գծի իրականացման տասը տարում ԽՍՀՄ-ն դարձավ առաջավոր ինդուստրիալ յերկիր։ Մեր ծանր արդյունաբերությունն ընկեր Որջոնիկիձեյի զեկավարությամբ, վորն այնպիսի ջեմեռանդությամբ, այնպիսի սիրով ու հմտությամբ նվիրվեց ծանր արդյունաբե-

բության գործին (բուռն ծափահարություն) . . . մեր ծանր արդյունաբերությունը բաղա ստեղծեց ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման համար : Ժողովրդական տնտեսության հաջողությունների համար մենք պարտական ենք այն . բանին, վոր մենք ունենք ծանր արդյունաբերություն, վորն ամենաառաջավոր տեխնիկայով զինում ու վերադիմում ե մեր ամբողջ տնտեսությունը : Նա գյուղատնտեսությանը տվեց տրակտոր, կոմբայն ու ավտոմեքենաներ, նա տալիս ե նոր վագոններ և հզոր շոգեքարշեր յերկաթուղային տրանսպորտին, առաջնակարգ դաշտայացներ ու մեքենաներ՝ մննդաբոլյումաբերությանը, թեթև ու անտառային արդյունաբերությանը : Ծանր արդյունաբերությունը հասնում ե ամերիկյան ու յեփրապական ինդուստրիայի լավագույն որինակներին ու անցնում են նրանցից : (Ծափահարություն) :

Ընկեր Ստալինը, զարգացնելով մեր կուսակցության ու աշխարհի ժողովուրդների առաջնորդ և ուսուցիչ կենինի ուսմունքը, նշեց այն ուղին, վորով պետք ե առաջ տանել բազմամիլիոն հյուղացիությունը դեպի սոցիալիզմ : Ուուսական հեղափոխության ամենադժվարին պրոբլեմը միշտ գյուղացիական հարցն ե յեղել : Հեղափոխության այս ամենադժվարին պրոբլեմը վերջին տարիներս վերջնականապես ու անդառնալիորեն լուծվեց ընկեր Ստալինի հանձնարեղ դեկավարությամբ՝ կոլտնտեսային կարգերի հաղթանակով :

Ընկ. Ստալինը միայն մեր ճանապարհի ճիշտ ուղղությունը չե վոր ցույց տվեց : Սա գլխավորն ե : Բայց

ճիշտ դիմ ունենալը դեռ քիչ ե : Պետք ե կարողանալ կենսագործել այդ գիծը : Պետք ե ունենալ լծակների ու մասսաների հետ կապող փոկերի մի ամբողջ սիստեմ, վորպեսդի կուսակցության գիծը դառնա մասսաների գիծը, վորպեսդի ամբողջ մասսան, կուսակցության զեկավարությամբ, պայքար մղի այդ գծի հաղթության համար : Հենց այդ ուղիով կարողացավ ընկեր Ստալինն ամենակարծ ժամանակամիջոցում իրականացնել բազմամիլիոն գյուղացիական մասսաների համաշխարհային պատմական նշանակություն ունեցող այդ մեծ անցումը դեպի սոցիալիզմը : Ընկեր Ստալինը կոլտնտեսային գյուղացիությանը տվեց կոլտնտեսային կյանքի կանոնադրությունը, ստալինյան կանոնադրությունը, վոր յուրաքանչյուր կոլտնտեսականի անձնական շահերը ճիշտ կերպով զուգակցում ե հասարակական շահերի հետ, անձնական շահերը յենթարկելով հասարակական շահերին :

Անձնական և հասարակական շահերի ստալինյան այս զուգակցումը կոլտնտեսականների աշխատանքի կաղմակերպման ու վարձատրման մեջ, կոլտնտեսական անձնական տնտեսության և կոլեկտիվի հանրային տնտեսության հարաբերակցության մեջ, կոնտրակտացիայով հանձնվող մթերքների մթերման դների սահմանման մեջ,— յերբ կոլտնտեսությունը բարձր բերքի ու հանձնման նորմաների գերակատարման համար կրկնակի ու յեռակի դին ե ստանում, — այս բռնորդ հասցըեց կոլտնտեսային գյուղատնտեսության ծաղկմանը : Այս տարի մենք ավելի քան յերբեքե հավաքել ենք շատ ավելի հացահատիկ, բամբակ, ճակնդեղ,

կղրտովիլ — այն ամենը ինչ անհրաժեշտ ե մեզ : (Ծա-
փահարություն) :

Ստախանովյան շարժումը ցույց տվեց և սպացու-
ցեց, վոր կարելի յե աշխատել ավելի ու ավելի լավ և
ավելի ու ավելի բարձրացնել աշխատանքի արտադրո-
ղականությունը : Դրա համար անհրաժեշտ պայման-
ները մատնանշել եր ընկեր Ստալինը դեռ տնտեսա-
վարների խորհրդակցությանն արտասանած իր պատ-
մական ճառում : Այդ պայմաններից ամենադիմավոր-
ներն են՝ ճիշտ կառուցել աշխատավարձը, վերացնել
Հավասարեցումն ու գիմազրկությունը, հոգ տանել
բանվորների մասին :

Ընկեր Ստալինի վեց պայմանների, ցուցումների
իրականացումը կաղըերի մասին, վորոնք վորոշում են
ամեն ինչ, նրա կոչը մարդու համար՝ հոգ տանելու
մասին, — ահա այն, վորը բարձրացրեց համաժողո-
վրդական ստախանովյան շարժումը, յերբ միլիոնա-
վոր աշխատավորներ մարտի գիմեցին սոցիալիզմի
նոր բարձունքներին տիրապետելու համար, նոր
բախտավոր, կուլտուրական կյանքի համար : (Ծափա-
հարություն) :

Մեր կուսակցության և մասսաների առաջնորդի ու
կազմակերպչի, մեր ուսուցիչ ընկեր Ստալինի հան-
ձարին ենք պարտական, վոր հեղափոխության բազմա-
թիվ դժվարագույն հարցերն այժմ արդեն դադարել են
հարց լինելուց, շատ պրոբլեմներ դադարել են պրոբ-
լեմ լինելուց : Վերցնենք թեկուզ պարենային հարցը :
Դուք, բանվորներդ, բոլորից լավ եք հիշում, թե ինչ-
պես առաջ մեր կուսակցական պրոպագանիտիստները
հաճախ տանջվում եյին, բացատրելով բանվորներին,

թե ինչու չի բավականացնում հացը, շաքարը, միսր,
ինչու մախորկա չկա, գլանակ չկա : Յես իմ մասին
պետք ե ասեմ, վոր ինձ համար դժվար եր վոչ միայն
բացատրել, այլ և ե՛լ ավելի դժվար եր մատակարարել
այդ բոլորին : Ինչքա՞ն ավելի հեշտ ե այժմ բա-
ցատրել, թե ինչու հացը շատացել ե, յուղը շատ ե,
շաքարը շատ ե : (Յերկարատև ծափահարություն) :

Ահա յես լսեցի այստեղ հանդես յեկող դոնեցի
հանքահատներին : Վերհիշե՛նք, թե ինչպես եյին հան-
դես գալիս նրանք առաջ : Յերբ նրանց առաջարկում ե-
յին ավելացնել ածխի հանուլյթը, նրանք ասում եյին՝
ծխախոտ չկա, գլանակ տվեք, ոճառ տվեք, լվացվելու
ոճառ չկա, մակարոն տվեք, միս տվեք, ձավար տը-
վեք : Խակ այժմ դոնեցի հանքահատները հանդես են
գալիս և խոսում են վոչ ձավարի, վոչ հացի, վոչ ել
մսի մասին : (Յերկարատև ծափահարություն) :

Դրա պատճառն այն չե, վոր նրանք չգիտեն ի-
րենց կարիքները, չեն խոսում իրենց կարիքների մա-
սին : Վոչ : Նրանք շատ լավ եյին խոսում իրենց կա-
րիքների մասին : Նրանք ասում եյին՝ մեղ մոտ պիտ-
ինուն չկա, պատեֆոն չկա, լավ պլաստինկաներ չկան :
Պահանջները բոլորովին փոխվել են : Այդ վկայում ե
դարձացման նոր աստիճանի մասին, վորն առաջ մենք
յերազում եյինք և վորի իրականացումը մենք վաղուց
պատրաստում եյինք :

Սննդարդյունաբերության աշխատողները պարծե-
նում են նրանով, վոր ընկեր Ստալինի զեկավարու-
թյամբ մեր յերկիրը և նրա հետ միասին մեր սննդար-
դյունաբերությունն ածեց այնպես, վոր հոկտեմբերի
յեկից լիովին վերացվեցին բոլոր սննդամթերքների

քարտերը: Այժմ ամբողջ աղդաբնակությանն աղասուրեն վաճառվում ե այն ամենը, ինչ արտադրում ե Սննդարդյունաբերության ժողկոմատը: (Ծափահարություն):

Քարտային սիստեմը հեշտ եր և հաճելի սննդարդյունաբերության ձեռնարկությունների պարագ մարդկանց համար: Մթերքը պակասում եր և այն ամենը, ինչ արտադրվում եր, ձեռքից ձեռք եր անցնում, վերցնում եյին այն ամենը, ինչ վոր տալիս եյին: Ել ի՞նչ կարիք կա աշխատել լավ արտադրանք տալու, յերբ վատն ել են զնքցնում: Քարտային սիստեմը քայքայում եր սննդարդյունաբերության աշխատողներին: Մարդ ուղղակի ամոթ եր զգում տեսնելով այն յերշիկը, կոնֆետները, վոր այն ժամանակ արտադրում եյին շատ ձեռնարկություններ: Քարտային սիստեմը վերացնելուց դեռ շատ առաջ ընկեր Ստալինն ողնեց մեղ նրանով, վոր պահանջեց պայքար մղել ապրանքի լավ վորակի համար: Բնկեր Ստալինը միաժամանակ կազմակերպական ճիշտ խորհուրդ տվեց: Յես ընկեր Ստալինին պատմել եյի, թե սննդի ձեռնարկությունները բանվորների համար վատ ապրանք են արտադրում, մինչդեռ արտահանման համար արտադրում են հրաշալի կոնֆետներ, հրաշալի յուղ, միս, ողեկոլոն, հրաշալի յերշիկ: Այն ժամանակ ընկեր Ստալինը խորհուրդ տվեց՝ արտադրեցեք իրրև թե արտահանման համար, բայց արտասահման մի ուղարկեք՝ տվեք մեր խանութներին: (Ծափահարություն):

Դա կարծես փոքրիկ խորամանկություն եր, բայց լավ զենք հանդիսացալ այն պահին, յերբ հարկավոր

եր սովորեցնել մարդկանց լավ ապրանք տալ կոչ միայն արտաքին, այլև ներքին շուկային:

Իսկ վորպեսդի մենք կառուցենք ծանր ինդուստրիան, վորպեսդի արտասահմանից վոսկով դազգյահներ ու մեքենաներ ներմուծենք՝ արակտորային, ալտումորիլային և այլ գործարաններ կառուցելու համար, մենք հարկադրված եյինք արտահանել հենց մեղ հարկավոր սննդամթերքները: Այդ մեղ սովորեցրեց ինչպես հարկին և աշխատել արտահանման համար: Այժմ մենք քիչ գործարաններ չենք կառուցել, մենք ինքներս ենք պատրաստում այն դազգյահներն ու մեքենաները, վորոնք առաջ պետք են ներմուծեյինք արտասահմանից, և մենք այլևս կարիք չունենք կտրել մեր սպառողներից յուղը, միսը, ձուն և մեղ հարկավոր այլ սննդամթերքները՝ արտահանելու համար: (Ծափահարություն):

Այժմ այդ բոլորը մենք տալիս ենք մեր խորհրդային խանութներին վաճառելու համար, վորովհետև մենք ամբողջ թափով ծավալել ենք մեր արդյունաբերությունը, բարձրացրել ենք վոսկու արդյունաբերությունը, վորովհետև այժմ մենք հղոր, կատարելապես անկախ, մեծ համաշխարհային պետություն ենք (Բուռն ծափահարություն: Բոլորը վատքի յեն կանգնում: Բացականչություններ՝ «Կեցցե՛ ընկեր Ստալինը»: «Ուռա՛»):

Այժմ մեղ մոտ ամենուրեք խանութներ են բացված, նրանց տրվում են լավ ապրանքներ, քարտերը վերացված են: Իսկ ապրանքի վորակին հետեւում են և' սննդարդյունաբերության բանվորները, և' բոլոր սպա-

սողները։ Վոչ միայն մեր գործարանների բանվորներն
են աշխատում լավ արտադրանք տալ, այլև խորհրդա-
յին յերկրի ամեն մի բնակիչ պայքար և մղում ապ-
րանքի լավ վորակի համար թեկուզ նրանով, վոր նա
վատ ապրանք չի վերցնում։ Սպառողը կարող է ընու-
րություն անել։ Մի խանութում դուք չի դալիս, դնում
և մյուսը։ Մենք ունենք սննդամթերքի հրաշալի խա-
նութներ, վորոնց կարող են նախանձել նաև արտա-
սահմանում։ Խանութներում վաճառվում են բարձրորակ
ընտրովի ապրանք։ Այժմ արդեն սննդի ձեռնարկու-
թյուններում դիտեն, վոր վատ յերշիկը և վատ ոճա-
ռը վոչ վոք չի զնի և այդ ապրանքը պառկած կմնա ու
կփչանա, վնաս կբերի գործարանին, խայտառակու-
թյուն կատացվի, կմիջամտի ժողկոմատը, և մեկ ել
տեսաբ՝ կուսակցական ու խորհրդային վերահսկու-
թյունը։ (Ծիծաղ)։

Սննդի ինդուստրիայի ստախանովականներն այժմ
յերբեմն հանդիպում են այնպիսի փաստի, յերբ չգի-
տեն, թե արտադրածն ինչ անեն, և այն ել վոչ բան-
վորների մեղքով։ Աչա, որինակ. կոնֆետի գործա-
րանները վատ կոնֆետներ չեն պատրաստում, սա-
կայն պակասում են փաթաթելու թուղթը և կարիք և
լինում այդ կոնֆետները հանձնել տուերական ցան-
ցին չփաթաթած, խոնավությունից պահպանելու հա-
մար վրան շաքարափոշի ցանած։ Հասկանալի յե, վոր
այդպիսի կոնֆետներ սիրով չեն վերցնում, մանա-
վանդ քաղաքներում, իսկ դրանք ավելի հեռավոր
շրջաններ փոխազրելու գործը, վորտեղ ավելի պա-
հանջ կա, վատ և կազմակերպել կոոպերացիան։ Կոն-
ֆետի գործարաններում կոնֆետ փաթաթելու արտա-

սահմանյան շատ ավտոմատ մեքենաներ անողագոր-
ծելի յեն մնում՝ բարակ թուղթ չինելու պատճառով։
Ընկեր կորովը պետք ե ընդհանրապես ավելի շատ
թուղթ պատրաստի և մասնավորապես պատրաստի
հատուկ տեսակները՝ սննդարդյունաբերության հա-
մար, այլապես կը անդադի սննդարդյունաբերության
շատ ձյուղերի զարգացումը և զգալիորեն կդժվարա-
նա ավելի շատ քանակությամբ բարձրակ ապրանքի
արտադրումը։

Նույնպիսի գժվարություններ ե կրում կոնսերվի
արդյունաբերությունն սպիտակ քիքեղի սուր պակա-
սության պատճառով։ Ծանր արդյունաբերության ժող-
կոմատը պետք է, ինչ գնով ել լինի, ավելացնի սպի-
տակ թիթեղի արտադրումը, վորպեսզի կոնսերվի ար-
դյունաբերությունն ապահովվի տուփերով։ Յեթե մենք
թիթեղ ունենայինք, մեր ստախանովականներն արդեն
այժմ կարող ենին միլիոնավոր տուփերով ավելի ար-
տադրել, քան արտադրում են այժմ։ Գործարանների
կարողությունը և հումքի առկա քանակը հնարավոր են
գարձնում այդ, չկա միայն թիթեղ։

Այժմ մեզ պակասում են նաև պահեստներ ու պար-
կեր՝ շաքարի համար։ Այս բոլորը նոր գժվարություն-
ներ են, վորոնք հայտնի չենին մեզ առաջ, յերբ քիչ
որոգուկտ եր արտադրվում։

Մոլոտով. —Պարկ կարող են տալ ձեզ։

Միկոյան. — Յես խնդրում եմ ընկեր Զուբարին՝
լրացուցիչ կերպով տալ մեզ 5 միլիոն պարկ, վորով-
հետև շաքար լցնելու տեղ չունենք։

1932—33 թ. մննդարդյունաբերությունը վատ եր
աշխատում իր սեփական հետամնացության և հումք

ավող զյուղատնտեսության ցածր մակարդակի պատճառով: 1934 թվականին արդյունաբերությունն արագ քայլերով առաջ դնաց: Մենք աշխատում ենք հասնել նրան արտադրության տեմպով և ընթանալ ծանր արդյունաբերության անմիջական հետքերով: Ճիշտ ե, ընկեր Որջոնիկիձելին հասնելն ու նրանից անցնելն ընդհանրապես դժվար է: Ծանր արդյունաբերության հասնելը ծանր է, բայց Խորհրդային Միության սննդաբարդյունաբերությունը հաստատապես առաջն տեղն է գրավում Ծանր Արդյունաբերության ֆողկոմատից հետո: (Ծափակարություններ):

Անցյալ տարի Սննդաբարդյունաբերության ֆողկոմատի արտադրանքն աճեց 25 տոկոսով: Այս տարի՝ տաս ամսվա ընթացքում՝ աճել է 24,6 տոկոսով: Այսպիսով սննդաբարդյունաբերության յերկու տարվա աճը կազմում է 50 տոկոս:

Առանձնապես պետք է նշել այնպիսի ապրանքների արտադրության աճումը, վորոնք բավական քանակությամբ չունելինք առաջ: 1933 թվականին մենք արտադրել ենք 2.500 հազար արկղ մախորկա, այս տարի՝ 3.600 հազար արկղ: Մենք լիուլի մատակարարում ենք մախորկա բոլոր նրանց, ում պետք է, ով ուղում է գնել: Մենք գլանակ նույնպես բավականաչափ ունենք:


1932 թվականին վատ եր ոճառի արտադրության վիճակը: Ընկեր Ստալինի այն ժամանակ կատարյալ սկանդալ բարձրացրեց: Յերկրում տեղ-տեղ տիֆ եր սկսվում, վաշվելու ոճառ չկար, իսկ Առժողկոմատի բժիշկները չըջում և պիտօքիս եյին մզում՝ «Ընկերներ», առողջության համար ողտակար և լվացվել,

լվացվեցե՞ք»: Հեշտ ե ասել «լվացվեցեք», իսկ ոճառ չկա: (Ծիծաղ):

Այն ժամանակ, ընկեր Ստալինի առաջարկով, ոճառի արդյունաբերությունը թեթև Արդյունաբերության ժողկոմատի սխատեմից հանձնվեց սննդաբարդյունաբերությանը: Այժմ ոճառի արդյունաբերությունն աճել է: 1933 թվականին մենք արտադրում եյինք 250 հազար տոնն ոճառ: 1935 թվականին մենք արտադրում ենք 430 հազար տոնն, այն ել լավ տեսակի աճառներ: Շատ գործարաններում ոճառի մեծաքանակ մնացորդներ կան: Այժմ Առժողկոմատի աշխատողների համար լավ է ադիտօքիս մզելը, վոր ավելի հաճախակի լվացվեն և ավելի շատ ոճառ գնեն:

Յերբ ոճառի արդյունաբերությունը հանձնեցին Սննդաբարդյունաբերության ժողկոմատին, յես հետեւ վելով ընկ. Ստալինի ցուցումներին, ոճառազործների առջև խնդիր դրի՝ վո'չ միայն ավելացնել ոճառի քանակը, այլև բարելավել վորակը: Բայց մենք գեռ չենք սովորել աշխատել այնպես, ինչպես աշխատում է ընկեր Ստալինը: Մեր Ստալինն ունի իմաստության անընդունակություն: Մենք դեռ տարիներ չարունակ սովորելու յենք նրանից աշխատանքի ստալինյան վոճը: (Ծափակարություններ):

Յես ինձ մոտ կանչեցի ոճառի արդյունաբերության ներկայացուցիչներին և հրամայեցի վերականգնել ոճառի լավագույն բոլոր տեսակները, բայց ինքս չըսահմանեցի, թե կոնկրետ կերպով ոճառի ինչպիսի տեսակներ, ինչ ոեցեպտուրայով, ինչպիսի փաթեթով, ինչպիսի մեծությամբ պետք է արտադրել: Այդ նրբություններին յես չհետեւեցի, թողնելով այդ գոր-



ծը գլխավոր վարչությանը և ձեռնարկությունների դիւրեկտորներին:

Իսկ ընկեր Ստալինն ինձ ասաց՝ «ոճառի նմուշները կենտկոմ բեր, այտեղ կլինեն Մոլոտովը, Կադանովիչը, մենք կքննենք դրանք, թող Համ Կ(բ)Կ կենտկոմը հաստատի»: Յես նմուշները բերեցի: Ընկեր Ստալինը, ընկերներ Մոլոտովի և Կադանովիչի մասնակցությամբ, ուշի-ուշով քննելով ոճառի բոլոր նմուշներ, ծանաթացավ յուրաքանչյուր տեսակին, ոեցեպտուրային, ձեռքի ոճառի յուրաքանչյուր կտորի կշռին, մի շարք նմուշներ խոտանեց, մյուսները զովեց և առաջարկեց արտադրել լայն չափով, մի քանի տեսակներն առաջարկեց փոխել: Մենք ստացանք Համ Կ(բ)Կ կենտկոմի հասուկ վորոշումը ոճառի արտադրության մասին, ոճառի տեսակների ու ոեցեպտուրայի մասին:

Աչա թե ինչպես ե աշխատում ընկ. Ստալինը և ինչպես ե սովորեցնում մեզ աշխատել: Յեթե Համ. Կ(բ)Կ կենտկոմը, ընկ. Ստալինն ինքն անձամբ, բնդուապ զրադիլում ե այնպիսի հարցով, ինչպիսին է ոճառի տեսակն ու ոեցեպտուրան, ապա մենք, ժողկոմներս և տնտեսվարները, պետք ե ընկեր Ստալինից հազար անգամ ավելի անմիջականորեն թափանցենք այդ գործերի մեջ: Հենց սա յե ստալինյան մեթոդը՝ վերցնել հարցի միջուկը, բոլշևիկորեն քննել, կոնկրետորեն լուծել և դործն առաջ տանել վոչ թե ընդհանուր խոսքերով, այլ կատարման կազմակերպումով:

Միքանի խոսք յերշիկի՝ արտադրության մեջ մեր ունեցած հաջողությունների մասին: Այսոր, որինակ, Մոսկվայի մասի կոմբինատում մենք ամեն որ 30—40

հազար կիլոտրամի փոխարեն, արտադրում ենք 145 հազար կիլոդրամ յերշիկ, վորից 45 հազար կիլոդրամը՝ սոսիսկա: Մոտ կես միլիոն մոսկվացիներ ամեն որ ախորժակով ուտում են մեր սոսիսկաները: Դա մեծ գործե, վորովհետեւ այն ամենը, ինչ վերաբերում է մասամբին, միլիոնավոր մարդկանց, բոլշևիկի համար չափազանց կարևոր է: Մենք յերշիկի գործը բարձրացրինք վոչ միայն Մոսկվայում, այլև Լենինգրադում ու մի շարք այլ քաղաքներում: Անցյալ տարի Սննդարդյունաբերության ֆողկոմատոն արտադրել է ընդամենը 47 հազար տոնն յերշիկ, իսկ 1935 թվականի տաս ամսում արդեն արտադրվել ու վաճառվել է 76 հազար տոնն յերշիկ, վորն ապահովում է արտադրության կրկնապատկումը 1935 թվականին, համեմատած 1934 թվականի հետ:

Այս գործով ել հետաքրքրվեց անձամբ ընկեր Ստալինը: Յերբ յես նրան պատմեցի, թե ուզում եմ առաջ տանել սոսիսկաների արտադրությունը, նա ամեն կերպ աջակցեց ինձ և ասաց՝ «Ամբողջ թափով առաջ տարայդ գործը»: Այս գեղեցում ընկեր Ստալինը մատնաշեց, թե Ամերիկայում կան մարդիկ, վորոնք միլիոնատերեր են զարձել սոսիսկաների արտադրությամբ:

Իսկ Ամերիկայի պրակտիկան մենք պետք ե ուսումնասիրենք, վորովհետեւ, յեթե պիտի սովորել կապիտալիստներից, ապա առաջին հերթին պիտի սովորել ամերիկացիներից:

Մեր յերկիրը, ինչպես և Ամերիկան, հսկայական տերիսորիա և ահազին ազգաբնակություն ունի, այնպես, ինչպես և Ամերիկայում, մեծ արդյունաբերության հետ միասին զարգացել է դյուլատնտեսությու-

Ալ: Ամերիկան կապիտալիստական բոլոր յերկրներից ամենաբարձր աշխատավարձ ունեցող յերկիրն ե, իսկ մեր բանվորների աշխատավարձը զարդանում ե և զարդանալու յե ավելի արագորեն: Ամերիկան կապիտալիստական բոլոր յերկիրների մեջ ուներ արդյունաբերության զարդացման ամենաարագ տեմպ, վորը մոտենում ե մեր արդյունաբերության զարդացման տեմպին: Վերջապես, Ամերիկան հանդիսանում ե ամենաառաջավոր տեխնիկայի յերկիրը, ինչպես և մենք, վորպահետեւ նրա վոտքերից չեն կախված հին կապիտալիք և հին սարքավորման քարերը, ինչպես որինակ՝ Անդրայում:

Ահա թե ինչու մենք պետք ե նայենք Ամերիկային, վորպեսզի ամեն մի լովագույն բան փոխադրենք մեզ մոտ: Մենք մեր ամբողջ մսի արդյունաբերությունը կատուցում ենք ամերիկյան մսի արդյունաբերության տիպով: Այդ անում ենք մենք մասնավորապես նաև յերշիկի արտադրության նկատմամբ:

Մենք ձեռնամուխ յեղանք յերշիկի արտադրության ծավալմանը և հաշվի առանք այն դասը, վոր տվել ե մեղ ընկեր Ստալինն ոճառի արտադրության ծավալման կապակցությամբ:

Սննդարդյունաբերության ժողկոմարդ հրավիրեց յերշիկի գործի լավագույն վարպետներին ու մասնագետներին:

Մենք նրանց հետ ուշի-ուշով քննարկեցինք ամերիկյան ռեցեպտորան, յերշիկի ոռւսական հին գործարանների ռեցեպտորան, գերմանական ռեցեպտորան, ընտրեցինք լավագույն տեսակները և արտադրության համար հաստատեցինք 113 տեսակ յերշիկ ու

ապիստած մսեղեն: Սննդարդյունաբերության ժողկոմատին յենթակա վոչ մի ձեռնարկություն, վո՛չ մէ ձեռնարկության դիրեկտոր իրավունք չունի խախտելու հաստատված ռեցեպտուրան:

Բոլոր նրանք, ովքեր յեղել են Ներքին Առետրի ժողկոմատի և Սննդարդյունաբերության ժողկոմատի մթերքի խանություներում, միայն իմ հաղորդագրությունից չե, վոր գիտեն, թե մենք սովորել ենք արտադրել առաջնակարգ յերշիկ լայն ասսորտիմենտով, լավագույն տեսակի և մեծ քանակությամբ: Սննդարդյունաբերության մյուս մի շարք ճյուղերը նույնպես լավ աննդամ թերք են տալիս սպառողին, մեր հրաշալի ստախանովականներին, բանվորներին, բանվորուհիներին, աշխատավորներին, վորպեսզի նրանք կարողանան լավ աշխատելուց հետո՝ լավ ուտել:

Այս տարի մեծ հաջողություններ ձեռք բերեց մեր ձկնարդյունաբերությունը: 1933 թվականին Սննդարդյունաբերության ժողկոմատի ձկնարդյունաբերությունը, չհաշված տեղական արդյունաբերությունը, տվել ե 10,2 միլիոն ցենտներ ճուկ, 1935 թվին կտանք 13 միլիոն ցենտներ, այսինքն՝ 18 միլիոն փութ ալիք, քան 1933 թվին: Առանձնապես խոչոր հաջողությունների հասել են Մուրմանի ձկնորսները, վորի համար նրանք պարզեատրվել են շքանշաններով:

Ազով-Սևծովյան ձկնարդյունաբերական տրեստը հինգերորդ տարին ե կատարում ե իր պլանը: Տրեստն այս տարի նույնպես ժամկետից առաջ ե կատարել իր պլանը: Ազովի տրեստի կառավարիչ ընկ. Անդրիյելսկին արդեն հինգ տարի լավ ե ղեկավարում տրեստի աշխատանքը:

Շնորհիվ գարնանը կատարած լավ աշխատանքի, ժամկետից առաջ ավարտեց իր տարեկան պլանը Վոլգա-Կասպիի ձկնարդյունաբերական տրեստը։ Սակայն ձկան վորաը տրեստն աշնանն ավելի վատ կատարեց, քան գարնանը։

Զնայած Հեռավոր Արևելքի առանձնահատուկ գլխամարություններին և բանվորական ուժի շարունակվող հոսունությանը, Պրիմորիեյի Հեռավոր Արևելյան ձըկնարդյունաբերական տրեստը, վորն ամենախոշորն է Հեռավոր Արևելքում և վորի գլուխ կանգնած ընկ։ Կրապունիցկին լավ ե իմանում ձկնարդյունաբերության գործն ու վատ չի զեկավարում տրեստը, ժամկետից առաջ կատարեց տարեկան պլանը։

Առանձնապես ուրախալի յե, վոր իր պլանները շատ տարիներ չկատարելուց հետո, ժամկետից առաջ կատարեց իր տարեկան պլանը կրաբորս տրեստը, վորի կառավարիչն է ընկ։ Զապլիտինը։ Այս տրեստն ունի 9 մեծ նավ, վորոնք ովկիանոսում, ճապոնական կրաբորսների կողքին, զբաղված են կրաբ վորսելով։ Այդ նավերից ամեն մեկը մի լողացող կոնսերվի դործարան է, վորը կրաբ և վորսում ու վերամշակելով՝ կոնսերվ ե դարձնում։ Այդ կոնսերվիները հիանալի վորակ ունեն և մինչև այս տարի ել ամբողջապես արտասահման ելին արտահանվում։

Խաղաղ ովկիանոսում յերեք տարի ե, ինչ աշխատում է մեր կետանպան նավախումբը, կարմված յերեք նավեց և «Ալեռուտ» մեծ նավից, վորը կետ ձկան վերամշակման մի գործարան է հանդիսանում։ 1933 թվին այդ նավախումբը վորսացել է 203 կետ ձուկ, 1934 թվին՝ 339, 1935 թվին՝ 487 կետ ձուկ։ Նավա-

տորմի հրամանատարն ընկ։ Դուդնիկն ե, վորը յերկու առարի շարունակ հիմնովին գերակատարում է արտադրության պլանը։

Զալետը ե մոռանալ, վոր կրաբ վորսացողների և կետառապանների այս առաջնակարգ տեխնիկան, ինչպես նաև ձկնարդյունաբերության ամբողջ հզոր սպառազինումը սաեղծել ե Խորհրդային իշխանությունը։ (Ծափահարություններ)։

Տարգա սկզբին ընկ։ Սերգոն ինձ խնդրեց ավելի շատ սպիրտ տալ, վորը հարկավոր ե սինթետիկ կառուչուկի արտադրության համար։ Յես զբաղվեցի այդ գործով։ Այդ գործին լավ լծվեց Գլավսպիրտի պետընկ։ Գլիխնուկին և մենք այնքան սպիրտ արտադրեցինք, այնքան պաշար պատրաստեցինք, վոր հիմա յես գնորդ եմ վինտուում։ Ողու վրա շատ սպիրտ չի ծախսվում։ Ստախանովականների համար շատ խմելը անհարմար ե։ (Ծիծաղ)։ Կոմբայնավարների համար նույնպես անհարմար ե։

Տագանրովի գործարանի պողպատ ձուլող ընկ։ Բոբիլյովն այստեղ պատմեց, վոր յերբ իրենք պատրաստվում ելին քննարկել այն հարցը, թե ինչպես կարգի գնեն աշխատանքը ստախանովականորեն, նըշանք միայն թեյ ելին խմում։ (Ծիծաղ)։ Լավ ե, վոր միայն թեյ ելին խմում։ Իսկ ընկեր Գլիխնուկին նեղանում ե, վոր ժողովուրդը ողի քիչ ե խմում ու վիժեցնում է իր պլանը։ (Ծիծաղ)։

1935 թվին ավելի քիչ ողի յե վաճառվել, քան 1934 թվին, իսկ 1934 թվին, ավելի քիչ, քան 1933 թվին, չնայած ողու վորակը լրջորեն լավացել ե։ Սա Սննդաբերդյունաբերության ժողկոմատի միակ արտա-

դրական ճյուղն ե, վոր վոչ թե առաջ ե գնում, այլ հետ ե գնում՝ ի ցավ մեր ողու արդյունաբերության աշխատողների: (Ծիծաղ):

Բայց վոչինչ, վոր վշտանում են մեր սպիրտագործները, վոչինչ, վոր ժողովուրդը քաղաքում ու դյուզում գնալով ավելի ու ավելի քիչ ողի յե խմում: Այդ լավ ե: ընկեր Ստալինը վաղուց մեզ նախազգուշացնում եր, վոր յերկրի կուլտուրայի աճման հետ մեկտեղ ողու սպառման մակարդակը կիշնի ու կաճ կինոյի և ռադիոյի դերն ու նշանակությունը:

Բայց սպիրտագործներին ել հարկ չի լինի վշտանալ: Սպիրտը ավելի ու ավելի մեծ քանակությամբ կծախսվի կառուչուկի արտադրության և այլ տեխնիկական կարիքների համար:

Մեր յերկիրն այժմ նոր պահանջներ ե առաջադրում՝ նա պահանջում ե պատեֆոն, դաշնամուր, կինո, ռադիո: Յերկիրն ավելի ու ավելի մեծ չափերով ե ապրում նոր կուլտուրական խորհրդային կյանքով: (Ծափահարություն):

Շաքարի արդյունաբերությունն այս տարի ահազին աջակցություն ստացալ կոլտնտեսություններից ու խորհանտեսություններից, վորոնք շատ ճակնդեղ տվին: Շաքարի գործարանները մենք լավ եյինք պատրաստել արտադրական սեղոնին, խստիվ ստուգել եյինք նորոգման վորակը մինչև գործարանների գործարկումը: Շաքարի գործարաններն անընդեջ աշխատում են:

Պետք ե ասել, վոր սննդարդյունաբերությունը կարող ե անընդեջ աշխատել ու գերակատարել իր պլանները (և վոչ միայն սննդարդյունաբերությունը)

միայն այն պատճառով, վոր ընկ: Կազմանովիչը—չնորհակալություն նրան — այնպես արագ ու վեր բարձրացրեց տրանսպորտի աշխատանքը: (Փոքորկալի ծափահարություն: «Ուռա» կանչեր: Զայն դահլիճում: «Մեր յերկրի լավագույն մեքենավար ընկեր կազանովիչն ուռա»):

Շաքարի արդյունաբերության աճման թվերն իրենք են խոսում իրենց մասին: 1934 թվին մթերվել ե 98 միլիոն ցենտներ ճակնդեղ, այս տարի արդեն մըթերել ենք 140 միլիոն ցենտներ, իսկ ճակնդեղ հանել ենք 154—155 միլիոն ցենտներ: Ճակնդեղի վորակը, նրա չափաբանությունն այս տարի բարձրագույն է բոլոր վերջին տարիների ընթացքում: Յես պետք ե առանձնապես նշեմ Ուկրաինայի կուսակցական և խորհրդագյին որդանների լավ աշխատանքը, առաջին հերթին Խարկովի ու Վիննիցայի մարզերում, վորոնք տվել են ամենաբարձր վորակի ճակնդեղ: Լավ ե աշխատել նաև Վորոնեժի մարզը:

Շաքարի կորուստն ավելի պակաս ե քան անցյալ բոլոր տարիներում միասին առած: Կորուստ ճակնդեղի կը պից առ 10-ն նոյեմբերի յեղած տվյալներով, կազմում ե 2,27 տոկոս, փոխանակ սահմանված 2,42 տոկոսի և փոխանակ անցյալ 3 և ավելի տոկոսի: Սա խոչոք հաջողություն ե:

Շաքարի գործարաններն իրենց աշխատանքի պրակտիկայում չուռ տվյալին արտադրության տրամիցին նորմաները: Գործարանները միջին հաշվով գերակատարում են ճակնդեղի վերամշակության որվա նորման 12,7 տոկոսով, իսկ կան գործարաններ են, վորոնք գերակատարում են նորման 20 և ավելի տոկոսով:

Շաքարի գործարանների այնպիսի արտադրողականություն, ինչպիսին այս տարի յեւ, յերբեք չկ յեզել:

Մենք ունենք ծրագրի գերակատարում՝ ի հաշվի ավելի քիչ կորուպմաների, ի հաշվի այն բանի, վոր կենսադրժվում և ընկեր Ստալինի լողունդը՝ «աեխնիկան այն մարդկանց գլխավորությամբ, վորոնջ տիրապետել են աեխնիկային, կարող եւ և պետք ե հրաշք ներ տա»:

Վորպեսզի ավելի ակնառու կերպով սկատկերնք ուրական նորմայի 12,7 տոկոսով գերակատարելու նշանակությամբ, յես պետք ե ասեմ, վոր ճակնդեղի մըշակման որական նորմայի մի տոկոսով գերակատարումը բոլոր գործարաններում տալիս ե այնքան լրացուցիչ արագագրանք, վորքան տալիս ե մի խոչոր նոր շաքարի գործարանը, կամ յերկու միջակ գործարաններ։ Այս նշանակում ե, վոր միջին հաշվով նորման բոլոր գործարաններում 12,7 տոկոսով գերակատարելով, մենք լրացուցիչ կերպով ստանում ենք այնքան շաքար, վորքան կստանայինք 13 նոր հզոր շաքարի գործարան կառուցելով։ Իսկ չե՞ վոր յուրաքանչյուր նոր խոչոր շաքարի գործարան արժե 20-25 միլիոն ռուբլի։

Ընթացիկ արտադրական սեղոնում մենք վորքա՞ն շաքար կտանք։ Կարդալով թերթերում հրապարակված շաքարադրծների սեպտեմբերյան խորհրդակցության մեջ իմ արտասանած ճառը, ընկ. Որզոնիկիձեն, վոր այն ժամանակ գտնվում եր արձակուրդում, ինձ մի նամակ ուղարկեց, վորի մեջ դրում եր. «Յես կարդացի քո ճառը։ Լավ ճառ եր, յես այդ ճառն այնպես հասկացա, վոր շատ շաքար կունենանք»։

Մյուս ընկերներն եւ հարցնում եյին՝ «դուք ինչ-

քան շաքար կտաք»։ Այն ժամանակ յես վախենում եյի շատ խոստանալ, բայց յես պնդում եյի, վոր այս տարի մենք անտարձակույս այնքան շաքար կտանք, վորքան մեր երկիրը չի ունեցել իր ամբողջ պատմության ընթացքում։ (Ծափահարություններ):

Շաքարի առավելագույն արտադրանք մենք ունեցել ենք 1930 թվի արտադրական սեղոնում՝ 108,8 միլիոն փութ, ցարիզմի որով առավելագույն քանակությունը յեղել ե 1914 թվի սեղոնին՝ 103 միլիոն փութ։ Այս տարի մենք կտանք շատ ավելի շաքար, քան 1930 թվի սեղորտային տարում։

Լյուքսենկո. — Զի՞ կարելի ավելի ստույգ թվեր ասել:

Միկոյան. — 1932 թվի արտադրական սեղոնում մենք արտադրել ենք 48 միլիոն փութ շաքար, 1933 թվին՝ 67 միլիոն փութ, 1934 թվին 78 միլիոն փութ, 1935 թվի սեղոնի ընթացքում մենք կտանք 125 միլիոն փութ և ամելի։ (Ծափահարություն)։

Ստալին. — Քիչ ե։ Հարկավոր ե 130 միլիոն փութ։

Միկոյան. — Յես կարծում եմ, վոր ընկեր Ստալինի այս առաջադրանքը կիրածործենք և 130 միլիոն փութ շաքար կտանք։ (Ծափահարություն)։ Այսպես ընկ. Ստալինը միշտ քամում ե մեր բոլոր ուկերվները։ (Ծիծառ, ծափահարություն)։

Ծանր արդյունաբերությունը վաղուց ե բարձրացել և մեր ամբողջ յերկիրն զգում ե նրա հաջողությունն ու ուժը, իսկ ամենաուրախալին այս տարի այն ե, վոր ի տարբերություն անցած տարիների՝ մենք ունենք ծանր, սննդի, անտառի, թեթև արդյու-

հարերության բոլոր նյուղերի ընդհանուր վերելք։
Բամբակի բերքն այս տարի լավ ե ու բամբակե
գործվածքների արդյունաբերությունը, վորն ունի
այնպիսի հիանալի հարվածային ստախանովականներ,
ինչպիսին են՝ Դուսյա և Մարուսյա Վինոգրադովա-
ները, կարող ե արագ տեմպերով առաջ դնալ և ավելի
ու ավելի շատ մանուֆակտուրա տալ։

Սննդի արդյունաբերությունն ունի նույնպիսի
հրաշալի ստախանովականներ, ինչպես և ծանր ու թե-
թև արդյունաբերությունը։ Սննդի արդյունաբերու-
թյան միջանի ճյուղերի ստախանովականները չեն կա-
րողացել դալ այս հավաքին։ Մեր ձկնորսները գտըն-
վում են Խաղաղ ովկյանոսում, Սառուցյալ ովկյանո-
սում, Կասպից ծովում, Նրանք այնուեղ ձուկ են վոր-
սում և չեն կարողացել դալ այս խորհրդակցությա-
նը։ Շաքարագործներն զբաղված են ճակնդեղի վերա-
ժակության լարված աշխատանքով։

Այս խորհրդակցությանը վոչ իրենց մեղքով բա-
ցակայող աննդի արդյունաբերության ստախանովա-
կանների անունից թույլ տվեք չերմ վողջույն հաղոր-
դել ստախանովականների առաջին համամիութենա-
կան խորհրդակցությանը։ (Ծափահարություն)։

Շաքարի արդյունաբերության բոլոր ստախանո-
վականներից աշխատանքի ամենաբարձր արտադրողա-
կանություն տվել ե Կալինինի անվան գործարանի
բանվոր ընկ. Լիտվիննենկոն, վորն աշխատում ե շաքա-
րի ճակնդեղի հյութ արտադրող վակուում ապարատ-
ների վրա, վորոնց մեջ գոլորշիացվում ե շաքարի
ճակնդեղի հյութը։ Սովորաբար մի բանվոր յերկու
ապարատ ե սպասարկում։ Ընկ. Լիտվիննենկոն մենակ

սպասարկում ե 6 ապարատ և գերակատարում ե բո-
լոր 6 ապարատների նորմաները։ Պետք ե ասել, վոր
վակուում ապարատի վրա աշխատող բանվորը բարձ-
րութակ բանվոր ե, ըստ եյության պրակտիկ քիմիկոս
է։ Այնպիսի ստախանովականներ, ինչպես ընկ. Լիտ-
վիննենկոն ե, այժմ կան չաքարագործարանների մեծ
մասում։

Ընկ. Կորուկովը — Մոսկվայի «Կրասնի Ոկտյա-
բըր» հրուշակեղենի գործարանի բանվոր, վորը սննդի
արդյունաբերության ստախանովական շարժում սկսող-
ների մեջ առաջնորդից եր, կրկնապատկել ե իր սպա-
սարկած հրուշակեղենի մեքենայի արտադրողականու-
թյունը։

Ընկեր Պիսարենկոն, վորն աշխատում ե աղի հան-
քահորում, հասել ե հորատման նորմայի յեռապատկ-
ման։

«Յավա» ծխախոտագործարանի մեքենավար Նինա
Վոլկովան և Գրունյա Իվանովան—Լենինգրադի ծխա-
խոտագործարանի բանվորուհիներ, վորոնք յելույթ
ունեցան այս խորհրդակցությունում, ստախանովա-
կան շարժման նախաձեռնողներն են ծխախոտի գոր-
ծարաններում։ Ընկեր Իվանովան աշխատում ե յերեք
արագաշարժ մեքենայի վրա, փոխանակ յերկուակի,
միշտ գերակատարում ե նորման և հերթի ընթացքում
նորմայով սահմանված 140 հազար գլանակի փոխարեն
արտադրում ե 226 հազար գլանակ։ Ընկ. Նինա Վոլ-
կովան աշխատում ե 6 պարկումի մեքենայի վրա, փո-
խանակ 4-ի և տալիս ե 430 հազար պարկում՝ 241 հա-
զարի փոխարեն։

Ընկ. Բիտյուգովան՝ Ողեսսայի Վորոշիլովի ան-

վան Կոնսերվի գործարանի բանվորուհի, և ընկ. Կրի-
միցկայան՝ Կրիմսկայա կայարանի կոնսերվի կոմբի-
նատից, իրենց ազգեղատների վրա աշխատելով հասել
են նորմայի համարյա կրկնապատիկին: Ընկ. Բիոյու-
դովան կիսաավտոմատ գլանիչ մեքենայի վրա աշխա-
տելով, մի հերթափոխում, սովորական 11 հազարի
փոխարեն հասալ ավելի քան 20 հազար տուակի ար-
տավորության: Ընկ. Կրիմիցկայան մի հերթի ընթաց-
քում յեփում և 16 տոնն բարձրորակ առմաս՝ նորմա-
յով սահմանված սովորական 8 տոննի փոխարեն:

Մոսկվայի մոի կոմբինատի մորթող բրիդաղի
բրիգադիր ընկ. Վոլկովն իր բրիգադի անդամների
թիվը կրճատեց՝ առաջվա 30-ից իջեցնելով 20 հոգու,
այնինչ նրանք այժմ յերկու անգամ ավելի անառուն
են մորթում, քան առաջվա 30 հոգին:

Այսպիսով ստախանովյան շարժումը մեկը մյուսի
հետեւից ընդգրկում և արդյունաբերության ճյուղերը:
Այժմ արդյունաբերության ու տրանսպորտի բոլոր
ճյուղերն առաջ են քաշում այնպիսի հերոսներ, վորոնք
պայքարում են սոցիալիստական գործարանների բարձր
արտադրողականության համար: Թափ և առել ամբողջ
յերկիրը: Ընկ. Ստալինի իմաստուն զեկավարությամբ,
ազատ աշխատանքի մեր յերկիրն առաջ կդնա տիտա-
նական քայլերով, դառնալով աշխարհիս ամենաբարձր
արտադրողականության յերկիրը, ամենաբարձր տեխ-
նիկայի յերկիրը, յերջանիկ, կուլտուրական կյանքի
յերկիրը, իսկ մեր Կարմիր բանակը, Կլիմ Վորոշիլովի
պահպանությամբ ե՛լ ավելի կամբացնի սոցիալիզմի
անպարտելի յերկրի պաշտպանությունը: (Յերկարածե-
ծափահարություններ: Բացականչություններ «ուռու»):



«Ազգային գրադարան



NL0196837

590

ԳԻՆԸ 30 Կ.

ЦЕНА 30 к.



Ա. ՄԻԿՕՅԱՆ

Речь на первом всесоюзном
совещании рабочих и работниц-
стахановцев

Армпартнадат, Ереванъ, 1935